# ԳԱՆՁԱՍԱՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՐՈՍ ԽԱՆՁՔԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՈՔ (1653–1678թթ.)

Լ.Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

XVI–XVIIդդ. թուրք-իրանական պատերազմները մեծ հարված հասցրին Հայաստանին: Երկիրը ավերակների էր վերածվել: Այս պատերազմները ծանր անդրադարձան նաև Հայ Առաքելական եկեղեցու վրա, որը պատմական հանգամանքների բերումով դարձել էր հայ ժողովրդի իղձերի արտահայտիչն ու առաջնորդը: Դա շատ լավ ներկայացրել է Առաքել Դավրիժեցին՝ գրելով. «Քանզի ի վերայ Աջոյն և Էջմիածնի ամենայն ազգն Հայոց կապեալ կան» [1]:

Ճգնաժամ էր ապրում նաև Հայ Առաքելական եկեղեցու չորս ճյուղերից մեկը՝ Գանձասարինը, որի հիմնադիրը Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիս եպիսկոպոսն էր, որ Հայաստանից Աղվանք գալով՝ կրոնական քարոզչություն էր ծավալել և 338թ. մաղբուքների Սանատրուկ Արշակունի թագավորի հրամանով նահատակվել էր ու թաղվել Ամարասի վանքում:

Դվինի 551թ. եկեղեցական ժողովից հետո այս եկեղեցու հայրապետները կաթողիկոսական տիտղոս ձեռք բերեցին: Ստեղծվեց Աղվանից կաթողիկոսությունը, որի հայրապետները ստորադաս լինելով Հայոց կաթողիկոսին, կրում էին «Կաթողիկոս Աղվանից, Լփնաց և Զողա» տիտղոսը: Աղվանքը Հայոց Արևելից կողմն էր՝ Ուտիքի ու Արցախի նահանգները և Կուր գետից արևելք ընկած բուն Աղվանքը: Լփնիքը Ալազան գետի վերին ավազանն ընդգրկող տարածքն էր: Իսկ Զողը կամ Մաղբթաց աշխարհը գտնվում էր բուն Աղվանքից արևելք՝ մինչև Կասպից ծով (հետագայում Ղուբայի խանություն):

Աղվանից առաջին կաթողիկոսը Աբասն էր (552–596):

1240թ. սկսած բարձրանում է Արցախի Խաչեն գավառի առաջնորդական կենտրոն Գանձասարի վանքի եպիսկոպոսության հեղինակությունը, որի հետ ավելանում է նաև նրա ազդեցությունը:

Խաչենում տիրող Հասան-Ջալալյան իշխանական տոհմի ներկայացուցիչներին հաջողվել էր ոչ միայն իրենց ձեռքում կենտրոնացնել Խաչենի աշխարհիկ իշխանությունը, այլև տիրանալ Խաչենի առաջնորդական գավազանին:

XIVդ. վերջին Աղվանքի կաթողիկոսական աթոռին տիրացած Հասան-Ջալալյանները կաթողիկոսանիստը վերջնականապես տեղափոխում են Խաչեն և հաստատվում Գանձասարի վանքում:

XVIIդ. սկզբին Մովսես Տաթևացի (1629–1632) և Փիլիպոս Աղբակեցի (1632–1655) գործունյա կաթողիկոսների վերանորոգչական ջանքերի շնորհիվ ամրապնդվում են Էջմիածնի կաթողիկոսական աթոռի քաղաքական, տնտեսական և հասարակական դիրքերը:

Ի տարբերություն Էջմիածնի՝ Գանձասարի կաթողիկոսությանը չհաջողվեց հաղթահարել ճգնաժամը: Օգտվելով Գանձասարի կաթողիկոսության թուլությունից՝ Փիլիպոս կաթողիկոսին հաջողվեց 1634թ. ձեռք բերել Շահ Սեֆիի հրովարտակը, որով բուն Ղարաբաղը տրվում էր Էջմիածնին, իսկ

---

[1] Մ.Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ Մատենադարան), ձեռ. 2776, էջ 267բ–268ա:

նրա կաթողիկոսին պետք է հանձնվեր այստեղ հավաքվող հոգևոր տուրքը տուրքը: Այս հրովարտակի հավաստի լինելը ապացուցվում է Փիլիպոս Աղբակեցու կոնդակով, որում Փիլիպոս կաթողիկոսը գրում է, որ տեսել է Զրաբերդի մելիքությունում գտնվող Եղիշե առաքյալի վանքը սվեր, իսկ նրան պատկանող գյուղերը՝ անառաջնորդ և անհովիվ: Նույն կոնդակով նա ամն Կիրակոս վարդապետի նշանակում է սույն վանքի առաջնորդ: Եղիշե առաքյալի վանքի առաջնորդ եպիսկոպոսը ավանդաբար նշանակվում և ենթարկվում էր Գանձասարի կաթողիկոսին: Էջմիածնի կողմից այս վանքի առաջնորդի նշանակումը ակնհայտորեն ցույց է տալիս, որ Գրիգոր Հասան-Ջալալյան կաթողիկոսը կորցրել էր վերահսկողությունը նույնիսկ Խաչենին (որտեղ գտնվում էր Գանձասարի վանքը) հարևան Զրաբերդի մելիքությունում գտնվող վանքի նկատմամբ: Էջմիածնի դեմ այս պայքարը դրամական մեծ ծախսեր էր պահանջում Գրիգոր Հասան-Ջալալյան կաթողիկոսից (1634-1653), և քանի որ Գանձասարի հարուստ թեմերից հոգևոր տուրքեր չէին ստացվում, Գրիգոր կաթողիկոսը սկսում է պարտքով գումարներ վերցնել: 1650թ. հրատարակվում է Շահ Աբբաս Բ-ի հրովարտակը, որով Շամախին տրվում է Էջմիածնին[2]: Շամախու թեմը Գանձասարի կաթողիկոսության ամենահարուստ թեմերից մեկն էր, և այնտեղից ստացվում էին զգալի եկեղեցական տուրքեր: Շամախու թեմի կորուստը անհանդուրժելի է Գրիգորի պարտատերերին, որոնք պահանջում են վերադարձնել պարտքերը: Գրիգոր կաթողիկոսին չի հաջողվում պարտքերը լրիվ հատուցել, և Գանձակում նստող Ղարաբաղի բեկլարբեկ Մուրթուզա-կուլի խանը պարտատերերի պահանջով նույն թվականին բանտարկում է կաթողիկոսին: Գրիգոր կաթողիկոսը ազատ է արձակվում միայն այն պայմանով, որ դեպքում իրեն ենթարկվող թեմերում, ժողովրդությունն անելով, մարի պարտքը[3]:

Այս ամենին զումարվում է Գանձասարի կաթողիկոսության ներսում ծայր առած երկպառակտիչական պայքարը:

Կաթողիկոսանիստ Գանձասարի վանքի միաբանները Պետրոս եպիսկոպոսի ղեկավարությամբ պահանջում են Գրիգորից՝ հրաժարվել կաթողիկոսությունից՝ պատճառաբանելով, որ Հասան-Ջալալյանները Գանձասարի կաթողիկոսական աթոռը վերածել են ժառանգական սեփականության[4]:

Պետրոս եպիսկոպոսը Ղարաբաղի դավառներում աջակցություն է ստանում. «Յարիան և կուսակիցք նորա (Պետրոսի-Լ.Մ.) բազում ի միաբանից Գանձասարայ և ի ժողովրդոց Արցախայ դավառակացն՝ Վարանդու, Գիւլիստանու և Զրաբերդու: Վիշտս ոչ սակաւ հասուցին կաթողիկոսին Տէր Գրիգորի, յորմէ նուազել սկսաւ միաբանութիւն Գանձասարայ և անչքանալ Աթոռն կաթուղիկոսական»[5]: Թերևս Պետրոս եպիսկոպոսի և նրա կողմնակիցների նկրտումներին վերջ տալու և նրանց սանձելու համար է Գրիգորը դիմել Շահ Աբբաս Բ-ին, որը հիջրայի 1062թ. ջումադ ալ-ջանի ամսին

---

[2] Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 1ա, վավ. 57:

[3] Մակար Բարխուդարեանց, Պատմութիւն Աղուանից, Արցախ. Բաթու, 1895, էջ 48-49:

[4] Մատենադարանի պարկերեն վավերագրերը, Հրովարտակներ, պրակ Բ, կազմեց Հ.Դ.Փափազյան, Ե., 1959, վավ. 42, էջ 147, 148:

[5] Հայերեն ձեռագրերի ժէ դարի հիշատակարաններ (1641-1660), հ. Գ, Ե., 1964, էջ 411:

[6] Վարդան արքեպիսկոպոս Օձնեցի, Պատմութիւն Հայոց, Մատենադարան, ձեռ. 1331, էջ 9ր:

[7] Նույն տեղում:

(1651թ. մայիսի 10-հունիսի 8) տրված հրովարտակով վերստին Գրիգորին հաստատել է Գանձասարի կաթողիկոս՝ հրամայելով հնազանդվել նրան: Հրովարտակում մասնավորապես ասվում էր. «Թող Գրիգոր կաթողիկոսին իրենց ավագ համարելով այդ հոգևոր պաշտոնը նրան պատկանող համարվի»[7]: Սակայն այս հրովարտակը Գրիգոր կաթողիկոսի դիրքերը չամրապնդեց:

Գանձասարի կաթողիկոսության հիմքերը խարխլող այս պայքարին վերջ տալու նպատակով Գրիգոր Հասան-Ջալալյան կաթողիկոսի կողմնակիցները ստիպված էին դիմել զիջումների և փոխհամաձայնության եզրեր փնտրել Պետրոս եպիսկոպոսի հետ:

Խաչենի մելիք Աթաբեկ Հասան-Ջալալյանի նախաձեռնությամբ համաձայնություն կայացվեց, ըստ որի, Պետրոսը դառնում էր Գրիգոր կաթողիկոսի որդեգիրը և դրանով՝ նաև Հասան-Ջալալյան տոհմի անդամը: Գրիգորի մահից հետո Գանձասարի կաթողիկոսական աթոռին նստելու էր Պետրոսը: Վարդան Օձնեցին իր «Պատմութիւն Հայոց» աշխատությունում մեջ է բերել Պետրոս եպիսկոպոսի երդմնագիրը, որի տակ իրենց կնիքն են դրել Մելիք-Աթաբեկ Հասան-Ջալալյանը և Գրիգոր կաթողիկոսի կողմնակից երեք եպիսկոպոսներ. «Հառաջի Աստուծոյ և սբ. Աջոյն Գրիգորիսի և սբ. Աթոռոյս Գանձասարայ ես՝ Պետրոս եպիսկոպոս, որդիութեան գիր տուի Գրիգոր կաթողիկոսին, որդի և ժառանգ լիցիմ նմա: Ոչ միայն հոգևոր հօրն, այլ եղբայրքն նորա, իմ լիցի եղբայր և 'ի կենդանութեան իմում տացից (կաթողիկոսությունը-Լ.Մ.) եղբօր որդոցն իմոց: Գրեցաւ թուին ՌՃ և մեկին (1652թ.)»[9]:

Սրանով Պետրոս եպիսկոպոսը, որը ծնունդով Վարանդա գավառի Հյուսիսում գտնվող Խանձք գյուղից էր[10], դառնում է Հասան-Ջալալյան տան որդեգիրը և արդեն որպես Հասան-Ջալալյան տոհմի անդամ իրավունք է ստանում փոխարինել իրեն որդեգրած Գրիգոր կաթողիկոսին՝ Գանձասարի կաթողիկոսական աթոռին: Որդեգրման այս ակտով, փաստորեն, Գանձասարի կաթողիկոսական աթոռին Հասան-Ջալալյանների ժառանգական իրավունքները ճանաչվում էին, և Հասան-Ջալալյան տոհմի կաթողիկոսների հերթագայությունը չէր ընդհատվում: Պետրոսը պարտավորվում էր նաև իր մահից առաջ Գանձասարի կաթողիկոս օծել միայն Հասան-Ջալալյան տոհմի ներկայացուցչին. կաթողիկոսությունը «տացից եղբօր որդոցն իմոց»: Այս աղբյուրը հայտնում է, որ կնքված համաձայնությունից հետո երկպառակությունը դադարում է, Գանձասարի կաթողիկոսությունը վերագտնում է կորսված հեղինակությունը և հարստությունը. «յետ այսորիկ կացեալ Գրիգոր կաթողիկոս խաղաղութեամբ՝ հարստացեալ ընչիւքն և միաբանօք»[11]: Իր «Պետրոս Խանձքեցի» հոդվածում[12] Բագրատ Ուլուբաբյանը գրում է, որ Պետրոսը Գանձասարի կաթողիկոս էր դարձել 1647թ. և Հասան-Ջալալյանների՝ Խանձքում բնավորված ճյուղից է: Վերը հիշատակված որդեգրման ակտը թույլ է տալիս պնդել, որ Պետրոսը չէր պատկանում Հասան-Ջալալյան տոհմին: Ինչ վերաբերում է Պետրոս Խանձքեցու կաթողիկոս օծելու՝ Բ. Ուլուբաբյանի նշած թվականին (1647), ապա չվիճարկելով այն՝ կարող ենք ենթադրել, որ Պետրոս Խանձքեցին կարող էր

---

[7] Սարգիս Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մաս Բ, Տփխիս, 1853, էջ 488-489:

[8] Մատենադարան, ձեռ. 4331, էջ 10ա:

[9] Նույն տեղում, էջ 10ա-10բ:

[10] Դիվան Հայ վիմագրության (այսուհետև՝ Դիվան), Արցախ, պր. V, Ե., 1982, էջ 143:

[11] Մատենադարան, ձեռ. 4331, էջ 10բ:

[12] Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 9, Ե., 1983, էջ 258:

հակաթոռ կաթողիկոս օծվել Հասան-Ջալալյան Գրիգոր կաթողիկոսից դժգոհ եպիսկոպոսների կողմից:

Դեռևս կենդանության օրոք Գրիգորը կաթողիկոս է օծում Պետրոս եպիսկոպոսին, որը նրա վախճանվելուց հետո 1663թ. Աբբաս Բ-ի հրովարտակով հաստատվում է Գանձասարի կաթողիկոս: «Բարվոք ճոխութեամբ հանգաւ ի Քրիստոս, թողնալ յաջորդ իւր Պետրոս եպիսկոպոս, որ և կարգեալ էր ի կենդանութեան իւրում, որ հաստատեցաւ կաթողիկոս Գանձասարայ հրովարտակաւ Շահ-Աբբաս Երկրորդի ոչ միայն ի վերայ մասին, այլ բոլոր Աղուանից՝ Գանձակայ, Շաքուայ, Շիրուանայ, ի թուին Տաճկայ 1073»[13]: Վարդան Օձնեցին, չնշելով Գրիգորի մահվան թվականը, հայտնում է, որ նրա մահից հետո, Հիջրայի 1073թ. (1663թ.) Աբբաս Բ շահը Պետրոսին հաստատում է Գանձասարի կաթողիկոս:

Երևանի Մատենադարանում պահվող վավերագրերից մեկում տրված է Գանձասարի կաթողիկոսների ցուցակ[14], որտեղ Պետրոս կաթողիկոսի դահակալման սկիզբ է նշված 1653 թվականը:

Հովհաննես Շահխաթունյանի՝ Գանձասարի կաթողիկոսների ցուցակում էլ Պետրոս կաթողիկոսի նվիրատվության սկիզբ է նշվում 1653 թվականը[15]:

Այսպիսով, եթե Պետրոսը կաթողիկոսի հոգևոր պաշտոնը ստանձնել է Գրիգորի մահից անմիջապես հետո, ինչո՞ւ է Շահ Աբբաս Բ-ն նրա հաստատման հրովարտակը արձակել հիջրայի 1074 թվականի սաֆար ամսին (Գրիգորյան տոմարով 1663թ. սեպտեմբերի 4-հոկտեմբերի 3)[16], այսինքն, Գրիգորի մահից և Պետրոսի՝ Գանձասարի կաթողիկոսական աթոռը զբաղեցնելուց 10 տարի անց:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի Շոշ գյուղի Սուրբ Ստեփանոսի եկեղեցու հյուսիսային մուտքի բարավորի վրա գոյություն ունի հետևյալ բովանդակությամբ արձանագրություն. «Շինեցուք զսուրբ Ամենասիրելի եկեղեցիս յիշատակ հոգւոց մերոց և ննջեցելոց ի հայրապետութեան Աղուանից տեառն Երեմիայի ... Թուին էր ՌՃԴ (1655թ.)»[17]: Վերոյակոչվող Երեմիա հայրապետը Գրիգոր կաթողիկոսի եղբորորդի Երեմիա Հասան-Ջալալյանն է, որը միայն 1675 թվականին է (այսինքն՝ Պետրոս կաթողիկոսի մահվանից հետո) Շահ-Սուլեյմանի կողմից կաթողիկոս հաստատվել: Վերջինիս հրովարտակում ասվում է, որ հաստատման հրովարտակ ստանալու համար շահին ներկայացած Երեմիան հայտարարել է, թե իր հորեղբայր Գրիգորը մահից առաջ «իր անչափահաս լինելու պատճառով կաթուղիկոսությունը հատկացվել է Պետրոս կաթուղիկոսին»[18]:

Այս տվյալներից կարելի է եզրակացնել, որ Գրիգոր կաթողիկոսի մահից հետո Պետրոսի կաթողիկոսության սկիզբն այնքան էլ հանգիստ ու հարթ չի եղել: Ամենայն հավանականությամբ, Հասան-Ջալալյան տոհմի այն ներկայացուցիչները, որոնք գժգոհ էին 1652 թվականին կայացած համաձայնությունից, և Պետրոսի հակառակորդ մի շարք հոգևորականներ փորձել են Պետրոսին հակառակ առաջ քաշել Հասան-Ջալալյան Երեմիային: Պետրոս կաթողիկոսին հաջողվել է ստանալ Ղարաբաղի բեկլարբեկ և Գանձակի խան

---

[13] Նույն տեղում:

[14] Մատենադարան, Կաթող. ղիվան, թղթ. 240, վավ. 132:

[15] Յոհաննէս եպիսկոպոս Շահխաթունեան, Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ գավառացն Արարատայ, հ. 2, Էջմիածին, 1842, էջ 331:

[16] Մատենադարան, Կաթող. ղիվան, թղթ. 2ա, վավ. 58բ:

[17] Դիվան, արձանագրություն 195, էջ 145:

[18] Մատենադարան, Կաթող. ղիվան, թղթ. 241, վավ. 201 (ռուսերեն պատճեն):

Մուրթուզա-Ղուլի խանի աջակցությունը, որը հիջրայի 1066թ. ջումադի ալ ավալ ամսի (1656 թվականի փետրվարի 26-մարտի 27) հրովարտակով հրամայել է Ղարաբաղի, Գանձակի և Շիրվանի մելիքներին, քյաղխուդաներին և ավաղներին՝ Գանձասարի կաթողիկոս ճանաչել Պետրոսին[19]: Չնայած այս հրովարտակի հետևանքով Գանձասարի կաթողիկոսական աթոռի նկատմամբ Երեմիա Հասան-Ջալալյանի նկրտումները մեծ հարված են ստացել, և մինչև 1675 թվականը Երեմիան որպես կաթողիկոս այլևս չի հիշատակվում, սակայն Սպահանի շահական դիվանը Պետրոսին ավելի հնազանդ դարձնելու, Գանձասարի կաթողիկոսության կախումն ուժեղացնելու համար Պետրոսի՝ Գանձասարի կաթողիկոս հաստատելու հրովարտակի հրապարակումը 10 տարի ձգձգվել է: Մուրթուզա-Ղուլի խանի հիշատակված հրովարտակը ուղղված էր ոչ միայն Ղարաբաղի, այլև Գանձակի և Շիրվանի հայ մելիքներին, քյաղխուդաներին և ավաղներին: Սրանից հետևում է, որ տեղական իշխանությունը, հանձին Մուրթուզա-Ղուլի խանի, ճանաչում էր Գանձասարի հոգևոր իշխանությունը ոչ միայն Ղարաբաղում, այլև Գանձակում և Շիրվանում:

Պետրոս կաթողիկոսի հաջորդ քայլը պետք է լիներ այդ թեմերի նկատմամբ Գանձասարի կաթողիկոսության հոգևոր իշխանության հաստատումը (Իրանի կենտրոնական իշխանության՝ շահի կողմից):

Աբբաս Բ շահի կողմից Գանձասարի կաթողիկոս հաստատելուց չուրջ 8 ամիս անց՝ 1664 թվականի գարնանը, Պետրոս կաթողիկոսը մեկնում է Թեհրան, որտեղ այդ ժամանակ գտնվում էր շահը, և նրանից հրովարտակ ստանում, որով Ղարաբաղի հետ մեկտեղ Գանձակի և Շիրվանի թեմերը նույնպես տրվում էին Գանձասարին: Հրովարտակում ասվում էր. «Գանձասարի աթոռի հայերի խալիֆա (կաթողիկոս) Պետրոսը ներկայացավ բարձրագույն ատյան և խնդրագրով հայտնեց, որ հնուց Ղարաբաղի, Գանձակի, Շիրվանի և նրանց գավառների կաթողիկոսությունը իրենց (Գանձասարի կաթողիկոսությանը – Լ.Մ.) է պատկանել: Ուչքիլիսայի (Էջմիածնի) կաթողիկոսը սուտ տեղեկություն է տվել և հրովարտակ է ձեռք բերել, որով այս բոլոր նահանգները ենթարկել է իրեն:

Դրա վերաբերյալ խնդրագրի հետ մեկտեղ ներկայացրեց Աղվանքի հայերի բազմակնիք համախոսականը, որտեղ ասվում էր, որ նրան (Պետրոս կաթողիկոսին-Լ.Մ.) են միայն ենթարկվում: Մունջիների (արքունի դիվանի կառավարիչներ-Լ.Մ.) կողմից մեզ հայտնվեց, որ այն մատյանը, ուր գտնված էին Ղարաբաղի, Գանձակի, Շիրվանի վերաբերյալ հրամանները, մնացել է Սպահանում և մեզ հետ այստեղ՝ Թեհրանում չէ: Մեր դիվանից մեզ ծանուցեցին, թե առաջին մեծամեծ արքաների շնորհված հրովարտակների համաձայն՝ կաթողիկոսությունը տրվել է հերթականորեն Հովհաննեսին (Հովհաննես Զ Հասան-Ջալալյան (1594-1633)-Լ.Մ.) և նրա հետևորդներին: Այդ պատճառով մենք ևս Ղարաբաղի, Գանձակի, Շիրվանի հայերի կաթողիկոսությունը անբեկանելի հրովարտակով շնորհեցինք Պետրոս կաթողիկոսին:

Եվ դուք, այս երկրների հայեր, Պետրոս կաթողիկոսին ձեզ կաթողիկոս ճանաչեցեք, նրա օրինական խոսքը կատարեցեք և այլևս հրաման մի խնդրեք: Գրվեց Հիջրայի 1074 թ-ի ռամազան ամսին (1664թ.-ի մարտի 28-ապրիլի 27)[20]:

---

[19] Նույն տեղում, թղթ. 2, վավ. 47:
[20] Նույն տեղում, թղթ. 2ա, վավ. 57:

Այս հրովարտակը ցույց է տալիս.

1. Էջմիածինը «սուտ տեղեկության» հիման վրա է ձեռք բերել այս թեմերը:

2. Պետրոսը ներկայացրել է «Աղվանքի հայերի բաղմակնիք մահսարը» (համախոսականը):

Այստեղից կարող ենք եզրակացնել, որ Գանձակի, Շաքիի, Շիրվանի հայկական համայնքները նույնպես կողմ են եղել վերստին Գանձասարի կաթողիկոսական աթոռին ենթարկվելուն:

3.Կարևոր կետը հրովարտակի այն հատվածն է, որտեղ ասվում է, թե «Ադրբեջան երկրի մատյանը», որտեղ պետք է գրանցված լիներ նախկինում այս թեմերի պատկանելությունը Գանձասարին, թեհրան չի բերվել, այլ մնացել է մայրաքաղաք Սպահանում: Հրովարտակում այս հատվածի առկայությունը թերևս նշանակում էր, որ հարցն ամբողջովին փակված չէ, և Էջմիածինը կարող է բողոքարկել այս որոշումը:

Իսկապես, Էջմիածնի կաթողիկոս Հակոբ Ջուղայեցին (1655-1680). «բողոք կալավ առ Շահ-Սեֆի (Սեֆի Բ կամ Սուլեյման շահ (1666-94)) վասն տալոյ Աղուանից կաթուղիկոսին վիճակն Շիրուանայ և Գանձակայ, ասեր, թէ զայն տուեալ են կաթուղիկոսունք Էջմիածնայ ժամանակաւոր, վասն ազատելոյ 'ի պարտուց զԱթոռն Գանձասարայ և ոչ 'ի սեփականութիւն նորայ)»[21]: Ուրեմն՝ Գանձակի և Շիրվանի թեմերը Գանձասարի կաթողիկոսությանը վերահանձնած Աբբաս Բ շահի մահից հետո Հակոբ Ջուղայեցին բողոքել է նորընծա Սուլեյման շահին և թեև ընդունել է, որ այդ թեմերը պատկանելիս են եղել Գանձասարին, սակայն դա պատճառաբանել է նրանով, որ պարտքերը մարելու համար են (այն էլ՝ ժամանակավոր) դրանք Էջմիածնի կողմից տրվել Գանձասարին:

Շահը երկու կաթողիկոսներին կանչում է Սպահան: Այս անգամ էլ Պետրոսը կարողանում է ապացուցել վիճահարույց թեմերի պատկանելությունը Գանձասարի կաթողիկոսությանը:

Իր այդ տեղեկությունը հավաստի դարձնելու համար Վարդան Օձնեցին գրում է, որ Սպահանում հարցի քննարկման ժամանակ ներկա է եղել նաև Աղեքսանդր վարդապետ Ջուղայեցին՝ ապագա Ամենայն Հայոց կաթողիկոսը, որը, «ականատես եղև ամենայն գործոց վիճաբանութեանց նոցա, որ վերստին հրովարտակաւ շահին, համաձայն առաջին արքայից տուեալ հրովարտակացն, տուաւ վիճակ աղուանից նաև Շիրուան և Գանձակ»[22]:

Սակայն Էջմիածնի և Գանձասարի կաթողիկոսությունների հարաբերությունները չեն խզվել՝ «երկոքին կաթուղիկոսք ո՛չ քակտեցին զսէր 'ի միջոյ իւրեանց և ոչ բարձցին զնախնի սովորութիւն հպատակութեան Աղուանից 'ի սուրբ Էջմիածնայ»[23]: Մակար Բարխուդարյանցը նույնպես գրում է, որ «Պետրոս կաթողիկոսը վերանորոգում է Աղուանից և Հայոց կաթուղիկոսաց մեջ եղած նախնի հարաբերությունը՝ սուրբ Էջմիածնում ձեռնադրուելով և օծուելով»[24]:

---

[21] Մատենադարան, ձեռագիր 4331, էջ 10բ:
[22] Նույն տեղում, էջ 10բ-11ա:
[23] Նույն տեղում:
[24] Մակար Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ. Բ, Թիֆլիս, 1907, էջ 66:

Աղվանից կամ Գանձասարի կաթողիկոսությունը նվիրապետական տեսակետից ստորադաս էր Ամենայն Հայոց կաթողիկոսությանը, որի կաթողիկոսների կողմից ձեռնադրվում էին Աղվանքի հայրապետները՝ սկսած Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիս եպիսկոպոսից: Ըստ հաստատված ավանդույթի՝ Աղվանքի հոգևոր և աշխարհիկ տերերի ժողովում ընտրվելուց հետո այդ ընտրյալ եպիսկոպոսը մեկնում էր Ամենայն Հայոց կաթողիկոսի նստավայրը, օծվում կաթողիկոս:

Պետրոսը Գանձասարի կաթողիկոս է դարձել անմիջապես Գրիգոր Հասան-Ջալալյան կաթողիկոսի մահից հետո՝1653 թվականին*: Սակայն Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից, ինչպես հաղորդում է Զաքարիա Ագուլեցին, Պետրոսի կաթողիկոսության հաստատումը տեղի է ունեցել Գանձասարի աթոռը նրա զբաղեցնելուց 19 տարի անց: «Թուին ՌՃԻԱ յուլիսի ԺԴ-ումն (1672թ. հուլիսի 14) վարդավառ կիրակի օրն 'ի սուրբ Էջմիածին Հակոբ կաթուղիկոսն ժողով արար եպիսկոպոսաց, վարդապետաց, քահանայից, աշխարհականաց, մինչ Գ, ԴՌ (3000-4000) մարդ կէր՝, խանի քարանչի, շատ երկրի մարդիկ եկին, որ այսօր սուրբ մեռոն աւրհնեցին: Դարձեալ, Գանձասարու Պետրոս կաթուղիկոսին գաւազան իշխանութեան տվեց, քանզի կաթուղիկոսութիւն վարեր, ապայ օրենք չէր. այժմուս տվեց: Շատ ուրախութիւն եղև, սիրով և հոժարութեամբ գնաց Գանձասար»[25]:

Ինչպես տեսնում ենք, Հակոբ Ջուղայեցին Հայրապետական գավազան է տվել Պետրոս կաթողիկոսին, ոչ թե օծել է կաթողիկոս, քանի որ Պետրոսը 1653թ. Աղվանքի եպիսկոպոսների կողմից օծվել էր կաթողիկոս: Հակոբ Ջուղայեցին, Պետրոսին ընդունելով օծյալ կաթողիկոս, նրան միայն հայրապետական գավազան է շնորհել, որը նշանակում էր Ամենայն հայոց կաթողիկոսության կողմից Պետրոսի կաթողիկոսության հաստատում: Գավազանի շնորհումը Էջմիածնի կաթողիկոսական աթոռի գերագահությունը ցուցադրող ակտ էր:

1672թ. Էջմիածնում Հակոբ Ջուղայեցու կողմից Պետրոսին հայրապետական գավազանի ընծայումից առաջ էլ հայոց երկու հայրապետների միջև սերտ շփումներ են եղել: Համաձայն Զաքարիա սարկավագ Քանաքեռցու՝ Հակոբ Ջուղայեցին իր հակառակորդ Օնոփրիոս վարդապետին (որին ճարտասանության համար Կարկուտ մականունն էին տվել) դատելու նպատակով կազմակերպված ժողովին հրավիրել էր նաև Աղվանից Պետրոս կաթողիկոսին*: Զաքարիա սարկավագը չի նշում, թե որ թվականին է տեղի ունեցել Օնոփրիոս վարդապետի դատը: Սակայն նշում է, որ Օնոփրիոսին դատող այս հոգևոր ժողովից հետո Նաջաֆ խանի փոխարեն Երևանի նոր խան է նշանակվում Ամիրգունա խանի որդին՝ Աբբաս խանը[27]:

Աբբաս-զուլի-խան Ղաջարը Երևանի խան է եղել 1663-1666 թվականներին[28]: Ուրեմն՝ այս ժողովը, որին մասնակցել է նաև Պետրոս կաթողիկոսը,

---

* Ըստ Սիմեոն Երևանցու, նույն՝ 1653թ.-ին էլ Պետրոսը Աղվանից կաթողիկոս է հաստատվել Ամենայն հայոց Փիլիպոս կաթողիկոսի կողմից (Սիմեոն Երևանցի, Ջամբռ, Վաղարշապատ, 1876, էջ 79):

[25] Զաքարիա Ագուլեցու օրագրությունները, Ե., 1938, էջ 108:

[26] Զաքարիա սարկաւագի պատմութիւն, հ. 2, Վաղարշապատ, 1870, էջ 66-70:

[27] Նույն տեղում:

[28] Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 3, Ե., 1977, էջ 571:

գումարվել է Էջմիածնում 1662 կամ 1663 թվականին: Այս փաստից թերևս հետևում է, որ Էջմիածինը ընդունում էր Պետրոս Խանդքեցու կաթողիկոսական իրավունքները Գանձասարի աթոռի նկատմամբ, բայց միայն 1672 թվականին է իրավաբանորեն ճանաչել դրանք, երբ Պետրոսը, Հակոբ Ջուղայեցու կողմից կաթողիկոսական գավազան ստանալով, ընդունել է Էջմիածնի կաթողիկոսի գերագահությունը:

Գանձասարի կաթողիկոսության՝ Գանձակի և անդրկուրյան թեմերը վերադարձնելուց և Էջմիածնի կաթողիկոսության հետ հարաբերությունները բարելավելուց բացի, Պետրոս կաթողիկոսը ակտիվորեն և հաջողությամբ զբաղվել է կաթողիկոսության ներքին կարգուկանոնի վերականգնմամբ՝ անհրաժեշտության դեպքում անմիջապես դիմելով շահին:

1661թ. հուլիսին Պետրոս կաթողիկոսը կարգավորում է Դաղիվանքի, Խաթրավանքի և մի խումբ հոգևոր աշխարհիկ հողատերերի վեճը: Վանքերի հողային սեփականության մի մասը վիճարկող այս խումբը պարտավորագիր է տվել Պետրոս կաթողիկոսին, որով վերջիններս պարտավորվում էին դադարեցնել դեռ իրենց նախնիների կողմից սկսած «վանքի ու թեմի դաւին» և բավարարվել Ատրենիս, Ըռուցփոր, Քավթառանց, Հաճավ, Բորու, Քարավաճառ, Գումերն, Ջվար գյուղերի մուլքերով (այս բոլոր գյուղերը գտնվում են Ծարի գավառում ներկայիս Քելբաջարի շրջանի տարածքում-Լ.Մ.)[29]:

1669 թվականի օգոստոսին Պետրոս կաթողիկոսը դիմում է Սուլեյման շահին՝ բողոքելով, որ Ղարաբաղի, Զարուզբիլի (Ծարի գավառի-Լ.Մ.) և Շամախու մուսուլման իշխանավորները կրոնական հալածանքի են ենթարկում նույն գավառների հայերին և թույլ չեն տալիս հայոց եկեղեցու ծեսերի կատարումը:

Սուլեյման շահը Ղարաբաղի բեկլարբեկ Ուղուրլու-խանին ուղղված հրովարտակում հայտարարելով, որ քրիստոնյաներին կրոնական հալածանքի ենթարկելը դեմ է շարիաթի կանոններին, հրամայում է քննել Պետրոս կաթողիկոսի բողոքը և սանձել մուսուլման իշխանավորների և ավատատերերի կրոնական մոլեռանդությունը[30]:

Շահը մեկ այլ հրովարտակով հարկերից ազատում է Գանձասարի վանքը և հրամայում է Ղարաբաղի բեկլարբեկին՝ ղարուղաներին ու քեղխուդաներին ոչ մի նեղություն չտալ և հարգանքով վերաբերվել Ղարաբաղի հայ հոգևորականությանը[31]: Վանքն ազատվում է այն բոլոր հարկերից ու պարտավորություններից, որոնք պարտադիր դանձվում էին բնակչության այլ խավերից; Սույն հրովարտակից կարող ենք եզրակացնել, որ վանքին տրվում էր հարկային իմունիտետի (մուաֆության) իրավունք:

Պետրոս կաթողիկոսը պայքարում է նաև այն ընչասեր հոգևորականների դեմ, որոնք իրենց նյութական շահախնդրությունից դրդված՝ մասնատում էին եկեղեցական թեմերը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Հերհեր գյուղի Սուրբ Գրիգորիսի եկեղեցու բեմի վրայի արձանագրությունից տեղեկանում ենք. «Կամաւն Աստուծոյ, ես Պետրոս կաթուղիկոս Աղուանից սուրբ աթոռոյն Գանձասարաց, նորոգեալ սուրբ աթոռս Ամարասայ՝

---

[29] Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 240, վավ. 160:
[30] Նույն տեղում, թղթ. 2ա, վավ. 76, Սարգիս Ջալալեանց, նշվ. աշխ., էջ 491-492:
[31] Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 2ա, վավ. 77:

արհիեպիսկոպոսութեանն բոլոր նահանգի Վարանդու և Քոշիզու, քանզի փեռեկտեալ և պատառեալ էին զվիճակ սորին՝ արարեալ ըստ իւրաքանչիւր կամաց: Իսկ մեք զցանկ հայրենի նորոգեալ, ժողովեցաք, նորոգեցաք: Զսիրելի աշակերտս մեր զտէր՝ Բարսեղ արհիեպիսկոպոսն ..., որ հրամայեցաք սմա շինել զեկեղեցիս հուարան Ամարասայ, զոր և շինեալ կատարեաց, ըստ մերում հրամանի, յաուր տաւնի այլակերպութեան Քրիստոսի և աւրհնեցաք զսուրբ տաճարս, անուանելով զսա Գրիգորիս, բերելով ի նշխարաց սրբոյն Գրիգորիսի, ամփոփեցաք երկրի Վարանդու և Քոշիզու, զի եղիցի այս երկու աթոռս մի»[32]:

Պետրոս Խանձքեցի կաթողիկոսի այս գործունեությունը նպաստում էր Գանձասարի կաթողիկոսության հոգևոր ազդեցության աճին և վանական տնտեսության զարգացմանը: Պետրոս Խանձքեցու օրոք մեծ թափ ստացավ կիսավեր վանքերի վերականգնումը և նոր եկեղեցիների կառուցումը: Վերականգնվեց V դարի վանական համալիր Ամարասը[33]: Կառուցվեցին Խաչենի գավառի Առաջաձոր գյուղի Սուրբ Աստվածածին (1668թ)[34], Պետրոս կաթողիկոսի ծննդավայր Խանձք գյուղի Սուրբ Ստեփանոս (1673թ.)[35], Վարանդայի Հերհեր գյուղի Սուրբ Գրիգորիս (1673թ.)[36], Փառիսոսի Հին Փիփի գյուղի (1670թ.) 40՝՝ եկեղեցիները և Զարեքա անապատի զանգակատունը (1659թ.)[38]:

Գանձասարի կաթողիկոսության վարկի ու հեղինակության աճի արտահայտությունն էր նաև այն, որ Նոր-Ջուղայի հայ առևտրական ընկերությունները Ռուսաստանում իրենց առևտրային գործառնությունները կարգավորելու համար դիմում են ոչ թե Հակոբ Ջուղայեցուն, այլ Գանձասարի կաթողիկոս Պետրոս Խանձքեցուն, որը 1672թ. դեկտեմբերի 2-ին նամակ է գրում Ալեքսեյ Միխայլովիչ ցարին, որտեղ խնդրում էր հովանավորել Նոր-Ջուղայի՝ Ռուսաստանում առևտրով զբաղվող խոջաներին և ամբողջ հայ ժողովրդին[39]:

Պետրոս Խանձքեցու օրոք Գանձասարի կաթողիկոսության ծաղկման մասին վկայում է նաև Ամենայն հայոց կաթողիկոս Աղեքսանդր Ջուղայեցին (1706-14թթ.), որը իր կոնդակներից մեկում գրում է, որ Պետրոս կաթողիկոսի օրոք միայն Գանձասարի վանքն ունեցել է 80 միաբան, բազմաքանակ եկեղեցական սպասք և դրամ[40]:

Չի չափազանցնում գրիչ Գրիգոր Երեցը, որ Պետրոս կաթողիկոսին կոչում է «կրկին լուսավորիչ, որ խնամօք Աստուծոյ և շնորհօք Սուրբ Հոգւոյն և բարի քաղաքականութեամբն իւրով լուսաւորեայ զխաւարեալ տունս Աղուանից և պայծառացոյց զեկեղեցիս կարգաւորութեամբ»[41]:

---

* Քոշիզը Մովատեղ գյուղի նախկին անունն է, գտնվում է Մարտունու շրջանի Հերհեր գյուղից մի քանի կիլոմետր հյուսիս: Այս գյուղում է գտնվում Մելիք-Փաշայանների տոհմական դամբարանը (Մակար Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, էջ 106):

[32] Դիվան, արձանագրություն 580, էջ 168:

[33] Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 240, վավ. 132:

[34] Դիվան, արձանագրություն 271, էջ 89:

[35] Նույն տեղում, վավ. 484, էջ 143:

[36] Նույն տեղում, արձանագրություն 571, էջ 164:

[37] Նույն տեղում, արձանագրություն 1036, էջ 269:

[38] Նույն տեղում, արձանագրություն 1035, էջ 268:

[39] Армяно-русские отношения в XVII веке, т.I, Е., 1953, с. 91-92.

[40] Մատենադարան, ձեռագիր 4331, էջ 15բ-18բ:

[41] Հայերեն ձեռագրերի ԺԴ դարի հիշատակարաններ (1641-1660), հ. Գ, Ե., 1984, էջ 851:

# ГАНДЗАСАРСКОЕ ПАТРИАРШЕСТВО ПРИ КАТОЛИКОСЕ ПЕТРОСЕ ХАНЦКЕЦИ (1653–1678гг.)

Л.А.МКРТУМЯН


## Резюме

Вопреки бытующему мнению, патриарх Петрос Ханцкеци не принадлежал к роду Хаченских Гасан Джалалянов, которые с конца XIVв. наследственно владели престолом Гандзасарского патриаршества.

Петрос Ханцкеци получил право занимать патриарший престол только после того, когда был усыновлен патриархом Григором Гасан Джалаляном(1634–1653).

Деятельность Петроса Ханцкеци была направлена на то, чтобы вернуть земельные наделы Гандзасарского патриаршества.

Эчмиадзинский католикосат пытался подчинить своей власти некоторые епархии Гандзасара, в результате чего эчмиадзинский патриарх Акоп Джугаеци (1655–1680) вынужден был признать принадлежность этих епархий Гандзасару, а также патриаршеское звание Петроса.